ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/20-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014թ. դեկտեմբերի 29-ին կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրում և 30.01.2017թ. գնման պայմանագրին կից կնքված № 4 համաձայնագրում 2017թ. օգոստոսի 30-ին կատարված փոփոխության:

Փոփոխության պատճառ : «Արեգ Արշակյան» ՍՊԸ կամահայտնությունը:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը, հիմք ընդունելով Վաճառողի կամահայտնությունը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում և 30.01.2017թ. կնքված № 4 համաձայնագրի մեջ կատարել կազմակերպության տնօրենի փոփոխություն՝ Խ. Գարանյանի փոխարեն որպես «Արեգ Արշակյան» ՍՊԸ տնօրեն նշել Նորայր Ղազարյանին:

Փոփոխության հիմնավորում: 29.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման Պայմանագրի 7.2 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի գլխավոր մասնագետ Գ. Տերյանին:

Հեռախոս՝ 294418:

Էլ. փոստ՝ g.teryan@mil.am :

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 2
№ ՇՀԾՁԲ-7/1-12 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30-ը օգոստոսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ն. Ղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 29.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը և 30.01.2017թ. կնքված N 4 համաձայնագիրը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով Վաճառողի կամահայտնությունը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում և 30.01.2017թ. կնքված № 4 համաձայնագրի մեջ կատարել կազմակերպության տնօրենի փոփոխություն՝ Խ. Գարանյանի փոխարեն որպես «Արեգ Արշակյան» ՍՊԸ տնօրեն նշել Նորայր Ղազարյանին:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արեգ Արշակյան» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Ք. Երևան, Ն. Զարյան 24
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ինեկոբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2052122104421001
Հ/Հ 900011141079	ՀՎՀՀ 00088588
ՀՎՀՀ 00867415	տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ն. ՂԱԶԱՐՅԱՆ

Հ/Հ 00315 7088